

Հ. Վասոյ բառը ուսկից ելած է :

Պ. Դիպուածական նմանութեամբ մը շինուած է Տաճկաց *պարուժ* բառէն, եւ կրնայ մեր մէջ ստուգաբանուիլ *վասոյ զօղ* կամ *վասոյ յօղ* եւ կամ *վասօ օղ* : Իսկ բուն *պարուժ* բառը Ֆունաց *փրթիս* (*քօնի*) ըսածն է որ *հրեղէն փողի* կընշանակէ : Նոյն յունական բառէն առնելով Ռուսներն ալ ըսեր են *փօրօս*. ուրիշ եւրոպացի ազգերը *փօլ-վիս*, *փօլվեր*, *փօլվերէ*, *փուտր*, *փուտր* կըսեն, որ առ հասարակ *փռշի* կընշանակեն :

Հ. Զուրը ընկած ու խղրուած մարդը պէտք է գլխիվար կախել ու ոտուրները ձեռնել որ ջուրը բերենէն ելլէ ու մարդը առողջանայ, ինչպէս որ շատ տեղ կընեն :

Պ. Ոչ երբեք բանեցընելու է այն վնասակար հնարքը. վասն զի անով՝ խղրուած մարդը կենդանանալու տեղը կըմեռնի : Հապա պէտք է զինքը աջ կողին վրայ պառկեցընել՝ գլուխը վեր բռնած. առանց ցնցելու՝ վրայէն պէտք է հագուստները մկրատով կտրել. յետոյ բրդէ ծածկոցի մը մէջ պլլելու է զինքը՝ կարելի է նէ կրակի զիմաց, ոտուրներուն տակն ալ տաք աղիւս դնելու է՝ լարի մէջ պլլած : Այնուհետեւ պէտք է բերանն ու քիբը սրբել, մարմնոյն այլ եւ այլ կողմերը չոր բրդեղէնով շփել, քրին ծակերէն մէկը մատոյի գոցել ու մեկայէն ներս փուքով (քեօրիկով) շունչ

տալ որ բոքին մէջը օղ մտնէ : Դարձեալ, քրին տակը պէտք է ոգիք (բուն) բռնել, կամ քէ փետրով խտողացընել քրին ծակերը. ատեն ատեն ալ փորը կամացուկ մը կոխել : — Այս հնարքներով շատ անգամ եղած է որ ջրէ հանուելէն եօթը ութը ժամ ետքը կենդանացեր են խղրուողները : Ասոնցմով կարելի է կենդանացընել նաեւ չուանով կամ ուրիշ կերպով խղրուած մարդիկ, բայց անոնցմէ հարկ է նաեւ արիւն առնել :

Հ. Այն առակն որ սովորական բան մը դարձած է շատ տեղ, մանաւանդ արեւելք, այսինքն քէ « Զնօքն որ կտրել չկըրցիր, համբուրէ ու ճակ-« տիղ զիր » (տաճկ. Քեանեմետիյին ելի եօփ տէ աներնա գօ) ինչպէս հասկընալու է :

Պ. Առակին ուղիղ իմաստը այսչափ միայն կրնայ ըլլալ քէ Քեզմէ զօրաւորին դէմ մի կենար, եւ դէմ կենալու նշան անգամ մի տար : Բայց գերութեան եւ ստրկութեան վարժած մարդիկ՝ կարծեն քէ այն առակին խօսքը շտկէ շիտակ առնելու է, որով քէ իրենց եւ քէ ուրիշներուն պարտք մը կըհամարին անարգ ցածութիւնը եւ վատ շողորբութիւնը. չեն մտածեր քէ ինչպէս քաջասրտութիւն կայ որ անմիտ յանդգնութեան կրնայ երթալ, այսպէս ալ խոնարհութիւն կայ որ մինչեւ վատութեան կերբայ :